

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԿՈՄԻՏԵ)
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԸ ԶՔԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ԹՈՒԻԶՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ) ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՏԵՍՈՒՉ

Հիմնական գործառույթները՝

1) վերահսկում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ու թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպություններում միասնական տեխնիկական քաղաքականության անցկացումը,

2) կատարում է օդանավերի շահագործման մասին ստացվող տեղեկությունների, թերությունների, պատահարների, միջադեպերի տեխնոլոգիական խախտումների հետևողական վերլուծություն և մշակում է օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման ու հուսալիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ,

3) մասնակցում է տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու տեխնիկական սպասարկման գծային կայանների, ինչպես նաև թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպությունների, օդանավերի տեխնիկական սպասարկման ուսումնական կազմակերպությունների սերտիֆիկացման աշխատանքներին համաձայն սահմանված կարգի,

4) կարող է մասնակցել ՀՀ տարածքում քաղաքացիական օդանավերի հետ ավիացիոն միջադեպերի, ինչպես նաև ՀՀ գրանցված օդանավերի հետ ՀՀ սահմաններից դուրս տեղի ունեցած ավիացիոն միջադեպերի հետաքննությունների աշխատանքներին՝ համապատասխան հանձնաժողովների կազմում,

5) Կոմիտեի կողմից սահմանված թռիչքային պիտանիության պահպանմանը վերաբերվող պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով մասնակցում է հետևյալ հարցերի ուսումնասիրմանը.

ա. օդանավերի և համալրող արտադրատեսակների ծառայության ժամկետների երկարաձգում,

բ. վնասված օդանավերի վերականգնում,

գ. ավելացված պարբերականությամբ օդանավերի տեխնիկական սպասարկման նոր կանոնակարգերի ներդրում,

դ. օդանավերի, նրա համակարգերի և համալրող արտադրատեսակների սպասարկում ելնելով նրանց տեխնիկական վիճակից,

ե. օդանավերի տեխնիկական շահագործման ընթացքում սահմանափակումներ սահմանող կամ վերացնող տեխնիկական որոշումներ:

7) կատարում է ՀՀ գրանցված կամ շահագործվող օդանավերի թռիչքային պիտանիության, ինչպես նաև թռիչքային անվտանգության տեսակետից կարևոր համարվող օդանավի պահեստամասերի, հարմարանքների եւ սարքավորումների ուսումնասիրություններ և ստուգումներ,

8) անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում նորմատիվ և հրահանգիչ փաստաթղթերում լրացումներ և փոփոխություններ կատարելու համար,

9) մասնակցում է նոր օդանավակայաններ և ավիաուղիներ շահագործելու համար կազմակերպվող տեխնիկական թռիչքներին,

10) մասնակցում է Վարչության կողմից իրականացվող ՀՀ օդանավերի տեխնիկական սպասարկման ավիացիոն մասնագետների վկայականների տրման և տիպի որակավորման շնորհման գործընթացներին:

11) անցկացնում է հանրապետության տարածքում և սահմաններից դուրս շահագործվող Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թռիչքային պիտանիության ապահովման ստուգումներ,

12) իրականացնում է ՀՀ տարածքի օդանավակայաններ ժամանած օտարերկրյա օդանավերի ստուգումներ՝ համաձայն Եվրոպական Ավիացիոն Անվտանգության Գործակալության (EASA) կողմից սահմանված չափանիշների:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն ավիացիոն տեխնիկական կամ ավիացիոն տեխնիկական կրթություն կամ բարձրագույն տեխնիկական կրթություն մեխանիկ կամ ավիոնիկ որակավորմամբ և առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

2) ունի օդանավերի տեխնիկական սպասարկման ավիացիոն մասնագետի գործող վկայական (օդանավերի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի առկայությունը պարտադիր չէ, եթե ավիացիոն մասնագետը

աշխատել է ռազմական ավիացիայում և ունի օդանավերի տեխնիկական սպասարկման առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ):

- 3) ունի իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- 4) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում:
- 5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- 6) անհրաժեշտ գիտելիքներ ՀՀ քաղաքացիական ավիացիայում շահագործվող օդանավերի, թռչող ապարատների և շարժիչների թռիչքային պիտանիության ու տեխնիկական շահագործման կանոնների և կառուցվածքի, դրանց տեխնիկական սպասարկման ծրագրերի և մեթոդների վերաբերյալ:
- 7) անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ է տալիս կիրառել այդ լեզվով հրատարակված տեխնիկական գրականությունը:

Բացառիկ դեպքերում տվյալ պաշտոնում կարող է ընդունվել աշխատանքի առանց աշխատանքային փորձի առկայության, եթե տվյալ մասնագետն ունի թռչող ապարատների և շարժիչների շահագործման գծով բարձրագույն կրթություն: Այս դեպքում օդանավերի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի առկայությունը պարտադիր չէ:

Աշխատավարձի չափը՝ 256 623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների), վկայականի (վկայականների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության

դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) համապատասխան մարմնից (մարմիններից) պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով անձնագիր, կամ էլեկտրոնային փոստի միջոցով (հեռ. 060-43-42-61, էլ. փոստ՝ shoushanik.mkrtchyan@gdca.am):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 17.15-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: